ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի մարտի 11-ի
թիվ 68-Ն որոշմամբ հաստատված
"Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ"

# ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
Բաց Բաժնետիրական Ընկերություն
ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ araratbank@araratbank.am
Հաշվետվություն թիվ 98, 07.05.2015թ.

| | | | |
|---|---|---|---|
| տեղաբաշխված արժեթղթերի դասը՝ | բաժնետոմս, | պարտատոմս | պարտատոմս |
| արժեթղթերի քանակը՝ | 1,277,501 հատ, | 40,000 հատ | 120.000 հատ |
| արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝ | 5,000 ՀՀ դրամ, | 10,000 ՀՀ դրամ | 25 ԱՄՆ դոլար |

*"Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և սպառիչ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել փաստաթղթի ամբողջականությունը":*

ստորագրող անձինք՝

| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
|---|---|---|---|
| Կարեն Հակոբյան | Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ | | 07.05.2015թ. |
| Զարուհի Մելքոնյան | Վարչության անդամ, Միջազգային գործառնությունների վարչության պետ | | 07.05.15 |
| Սուրեն Կարապետյան | Վարչության անդամ, Կորպորատիվ գործառնությունների դեպարտամենտի պետ | | 07.05.15 |
| Տիգրան Գալստյան | Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ | | 07.05.15 |
| Բագրատ Ճզմաչյան | Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալի | | 07.05.15 |
| Դավիթ Հարությունյան | Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ | | 07.05.15 |

Ստորագրությունները հավաստում եմ՝

| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
|---|---|---|---|
| Աշոտ Օսիպյան | Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն | | 07.05.15 |

07 մայիսի 2015 թ.

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից արժեկտրոնային պարտատոմսեր թողարկելու և տեղաբաշխելու մասին ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2015 թվականի մայիսի 5-ի թիվ 06/07/Լ որոշում (ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի որոշումը կցվում է):

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ տնօրինություն

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

Հասցե՝ 0010, ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19 Հեռ.՝ (+37410) 54-78-95 Ֆաքս՝ (+37410) 54-78-94 Էլ.փոստ՝ araratbank@araratbank.am

ք. Երևան

Կոդ: ՈՐԽ0102 – N 06/07 L
Դաս: ՀՊ
«05» մայիսի 2015թ.

## ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
## ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 23-ի 1-ին մասը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված $21^{6}$-ի 1-ին մասի ժզ) կետը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) կանոնադրության 12.1. կետի ժը) ենթակետը, ինչպես նաև քննարկելով Հայաստանի Հանրապետությունում թողարկված կորպորատիվ պարտատոմսերի շուկայի վերլուծությունը՝ Բանկի Խորհուրդը

**Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. Թողարկել պարտատոմսեր 2,000,000 (երկու միլիոն) ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով, 25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 80,000 (ութսուն հազար) հատ, 36 (երեսունվեց) ամիս մարման ժամկետով, տարեկան 7.25 (յոթ ամբողջ քսանհինգ հարյուրերորդական) տոկոս եկամտաբերությամբ, արժեկտրոնների եռամսյակային վճարումների պարբերականությամբ արժեկտրոնային պարտատոմսեր:

2. Տեղաբաշխումն իրականացնել անվանական արժեքով բաց բաժանորդագրությամբ՝ Բանկի գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի միջոցով: Տեղաբաշխումը սկսել ՀՀ ԿԲ-ի կողմից թողարկման ազդագրի գրանցման օրվան հաջորդող վեցերորդ աշխատանքային օրվա ժամը 09:00-ին և ավարտել տեղաբաշխման սկզբին հաջորդող 10-րդ աշխատանքային օրվա ժամը 16:00-ին:

3. Մինչև սույն որոշման 2-րդ կետում նշված ժամկետի ավարտը բաժանորդագրության ենթակա պարտատոմսերի քանակը լրանալու և հետ կանչվող հայտերի բացակայության դեպքում Բանկը դադարեցնում է բաժանորդագրության գործընթացը: Տվյալ դեպքում տեղաբաշխման ավարտ է համարվում բաժանորդագրությունը դադարեցնելու օրը:

5. Արժեկտրոնային եկամտի գումարը վճարել վճարման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ պարտատոմսերի գրանցված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա՝ պարտատոմսերի սեփականատերերի կողմից նշված հաշվարկային հաշիվներին:

6. Պարտատոմսերի մարումը կատարել Բանկի կողմից տեղաբաշխման ավարտի օրվանից հաշվարկած 36 (երեսունվեց) ամիս անց: Մարման գումարը վճարել պարտատոմսերի մարման օրվա նախորդ աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ գրանցված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա՝ պարտատոմսերի սեփականատերերի կողմից նշված հաշվարկային հաշիվներին:

7. Պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումը իրականացնել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2012 թվականի հունիսի 18-ի թիվ 17/03Լ որոշմամբ հաստատված «Արժեթղթերի թողարկման, տեղաբաշխման և սպասարկման կարգ»-ին համապատասխան:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Խորհրդի նախագահ՝ Բարսեղ Բեգլարյան

Իսկականի հետ ճիշտ է՝
Աշխատակազմի ղեկավար Մ.Ուզունյան